

ՏԱԹԵԻԱՑԵԱՆ ՍԵՐՈՒՆԴ

ՆՈՐԱՅՐ ԱՐՔ. ԾՈՎԱԿԱՆ



ԵՐՈՒՍԱԴԵՍ
ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑ ՑԱԿՈՐԵԱՆՑ

1991

922.14
Օ՛ն

ՏԱԹԵՒԱՑԵԱՆ ՍԵՐՈՒՆԴ

ՆՈՐԱՅՐ ԱՐԲ. ԾՈՎԱԿԱՆ



Handwritten signature in blue ink.

Handwritten text in blue ink, possibly a name or title.

Handwritten text in blue ink, possibly a name or title.

Handwritten text in blue ink, possibly a name or title.

ԵՐՈՒՍԱՂԵՍ

ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑ ԶԱԿՈՒԵԱՆՑ

1991

922.14
on

3491

ՀՐԱՄԱՆԱԻ

ՏՆՕՐԷՆ ԺՈՂՈՎՈՅ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԱՔՈՌԱՅՍ

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԻԱՑԻ

ԵՒ

ԻՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

Տաթեւացի Գրիգոր Վարդապետի դասախօսութիւններուն հետեւած են հարիւրաւոր աշակերտներ, որոնցմէ շատերուն անունն իսկ չէ հասած մեզի. ուրիշներուն ծանօթ ենք միայն անունով. կան ուրիշներ ալ, որոնց ոչ միայն անունները, այլեւ գործերը հասած են մեզի: Այս վերջինները ներկայացնելու նպատակն ունի սոյն գրութիւնը:

6 Մարտ 1991

Ն. Ա. Ծ.



ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԻԱՑԻ

(1344 ? – 1409)

Յովհաննէս Որոտնեցիի աշակերտներուն ամէնէն համբաւաւորն է Գրիգոր Տաթեացի, որ իր կարգին ամէնէն մեծ հիացողն է իր մեծանուն վարժապետին:

Գրիգոր Տաթեացի ծնած է շուրջ 1344ին: Հօրը անունն էր Սարգիս, որ Արճէշէն գաղթած էր և Փարպեցի աղջկան մը հետ ամուսնանալով հաստատուած էր Վայոց Ձոր, ուր և ծնաւ Գրիգոր իբր ուխտի զաւակ:

Գրիգոր պատանեկան տարիքին թեւակոխելուն մտած է Որոտնեցիի դպրոցը և 28 տարի մնացած անոր մօտ, ընկերանալով իր ուսուցչին ուխտաւորական այցելութիւններուն: Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց տաճարին մէջ իր ուսուցչին ձեռքով ստացած է քահանայական օծում (1371), Երզնկայի մէջ վարդապետական գաւազան (1373 ?), և 1387ին ծայրագուն-

նութեան աստիճան՝ Ապրակունեաց Վան-
քին մէջ: Հետեւեալ տարուան սկիզբը,
Որոտնեցիի վախճանելուն, ընդհանուրի
հաւանութեամբ, ինքը կը յաջորդէ անոր
իբրեւ աւագ վարդապետ:

Դրիգոր, Ապրակունեաց Վանքին մէջ
երկու տարի ուսուցանելէ յետոյ, կը փո-
խադրուի Տաթևի Վանքը, ուր մեծ ձեռն-
աւելութիւն պիտի գտնէր իր ուսուցչին
հղթօրմէն Սմբատ Օրբէլեան իշխանէն, և
իր քեռորդի՝ Առաքել Արքեպիսկոպոսէն:

Տաթևի մէջ Դրիգոր ժողովեց բազմա-
թիւ աշակերտներ և Դպրեվանքը հառ-
ցուց բարձր դիրքի, ուր երկու տասնեակ
տարիներու բազմարդիւն պաշտօնավա-
րութեամբ ճանչցուեցաւ Տաթևացի մակ-
դիրով:

Դրիգոր հաւատարմութեամբ հետեւ-
ցաւ իր մեծ ուսուցչին ուղղութեան պայ-
քարելով ունիթորական և տղթարմայա-
կան աւերիչ հոսանքներուն դէմ, և բոլուն
նախանձախնդրութեամբ պահպանելով և
պաշտպանելով Հայաստանեայց Եկեղեցւոյ
վաղեմի ուղղափառ դաւանութիւնը: Ինքն
ալ, իր ուսուցչին նման, աքնեցաւ ու

տառապեցաւ Հայ Եկեղեցւոյ պայծառութեան համար և Եկեղեցին պատուեց զինքը դասաւորելով իր տօնելի սուրբերուն շարքին:

Տաթևացին իր վաստակաւոր կեանքը կնքեց 1409, Դեկտեմբեր 27ին, իր սիրական մենաստանին Տաթևի մէջ, և թաղուեցաւ անդ, իր բաղմաթիւ աշակերտներուն գուրգուրալի ձեռքերով: Իր յիշատակին խաչքար մը կանգնել առաւ իր քեռորդին Առաքել Եպիսկոպոս Սիւնեցի:

Տաթևացիի պատկերը, չրջապատուած աշակերտներու մեծ խումբով մը, կը գտնուի Սրբոց Յակոբեանց թիւ 1291 ձեռագրին մէջ, նկարուած Ներսէս կրօնաւորի կողմէ:

Իբրև եկեղեցական մատենագիր, Տաթևացին ամենէն արդիւնաւորներէն մին հանդիսացաւ մեր մէջ, թողլով հսկայ գրաւոր աշխատութիւններ, որոնք անըսպառ շահմարան մըն են կրօնական գիտելիքներու: Ան գրած է առաւելաբար մեկնաբանական, կրօնական և իմաստասիրական երկեր, որոնց մէջ ամէնէն նշանաւորներն են,

1 - Գիրք Հարսմանց, տպուած Կ.
Պոլիս. 1729 ին, Իսլամաց վերաբերող
գլուխը տպուած Վիեննա, 1930 ին:

2 Բարոդգիրք. Ջմերան Հատոր,
տպուած Կ. Պոլիս. 1740 ին. Ամառան
Հատոր. տպուած 1741 ին:

3 - Ոսկեփորիկ, տպուած Կ. Պոլիս,
1746 ին — Հայ Գրողներ, Երուսաղէմ,
171. Լճ 396-399:

ՄԱՏԹԷՈՍ ՎՐԴ. ԶՈՒՂԱՅԵՑԻ

(1352 ? - 1412 ?)

Ծնած է ժ. Դ. Դարու երկրորդ կէսին սկիզբները հաւանաբար: Իր ուսումը ստացած է Որոտնեցի Էովհաննէս և Տաթևացի Իրիգոր Վարդապետներու ձեռքին ապա Այս վերջինին ջանքով և աշակերտներու խնդրանքով Տաթևի Դպրեվանքին Աւագ Վարդապետ կարգուած է 1402 ին: Ան եղած է Տաթևեան Դպրոցին երեսփոխան, կայացուցիչներէն մին, իբրև ուսուցիչ, քարոզիչ և հեղինակ, և պայքարած է ունիթսոներու դէմ: Վախճանած է ժ. Ե. Դարու երկրորդ տասնամեակին սկիզբները հաւանաբար:

Իր մատենագրական վաստակը կը բաղկանայ առաւելապէս Մեկնութիւններէ և Քարոզներէ: Կը թուենք գլխաւորները:

1. — Մեկնութիւն Ղուկասու Աւետարանին: Շարադրած է Երնջակի Ապրակունեաց Վանքին մէջ, 1391 թուին:

2. — Մեկնութիւն Յովհաննու Աւետարանին: Շարադրած է իր սւտուցչին Գրիգոր Տաթևացիի համանուն գործին հետեւողութեամբ:

3. — Վեցօրէից Գիրք: Դրած է 1395 ին, Տաթևի վանքին մէջ, Սարգիս կրօնաւորի խնդրանքով:

4. — Մեկնութիւն Գործոց Առաքելոց: Գրած է 1411 ին, «ի գրուես Ս. Կարապետի», Երնջակ, Ապրակունիք գիւղին մօտ:

Մասթէոս վարդապետ, ապրած ըլլալով Լէնկիթիմուրեան արչաւանքներու շրջանին կրած է չափ մը առաւապանքներ, և յաճախ ստիպուած է փախչիլ տեղէ տեղ, բայց միշտ ջանացած է օգտակար ըլլալ իր աշակերտներուն և ժողովուրդին խօսքով և գիրով: — Հայ Գրողներ, էջ 402-4:

ԱՌԱՔԵԼ ԵՊՍ. ՍԻՒՆԵՅԻ

(1356 ? - 1422 ?)

Նշանաւոր քերթող իմաստասէր և հռետոր։ Ծնած է ԺԴ դարու երկրորդ կիսուն սկիզբը ենթադրաբար։ Հայրը կը կոչուէր Դուիթ, իսկ մայրը՝ Մելիք, որ քոյրն էր Գրիգոր Տաթեացիի։ Առաքել մին է իր քեռիին ամէնէն տաղանդաւոր և երևի ոչակերտներէն։

Առաքել Եպիսկոպոս բաւական տարիներ (1407 - 1422 ?) վարած է Սիւնեաց թեմին և Տաթեի վանքին տաճհորդութիւնը։ Իր շիրիմը կը դանդաղէր Շատիկի Անապատին մէջ, և ծանօթ էր իր հրաշագործութիւններով։

Բաւական չափ են Առաքել Եպիսկոպոսի գրական երկերը, արձակ և ոտանաւոր, որոնք կը վերաբերին կրօնական և իմաստասիրական նիւթերու ընդհանրապէս և տպագրուած են զրեթէ ամբողջովին բացի քարոզներէն։

իր երկերուն գլխաւորներն են,

1. — Աղամգիրք, երեք տարբեր խմբ-
քագրութիւններով:

2. — Մեկնութիւն Սահմանաց Դաւթի,
գրած է իր մօրեղբօր յանձնարարութեամբ
և իր աշակերտներուն խնդրանքով: Տըպ-
ուած է Մատրաս, 1797ին:

3. — Համառօտ Լուծմունք Քերական-
ութեան, գրած է Կապանեցի Եղեկիէլ
Վարդապետի և Շմաւոն քահանայի խըն-
դրանքով: Տպուած է Լոս Անճելոս, 1982
ին. — Հայ Գրողներ, էջ 409-411:

ՅՈՒՆԱՆ ԳՐԻԶ

(1370? - 1422?)

Գրիչ Յունան վարդապետ ծնած է
ԺԴ. Դարու երկրորդ կիսուն մէջտեղերը
ենթադրաբար: Որդին էր Առաքելի և
Ամինիայի: ԺԵ. Դարուն սկիզբը, 1401ին,
իրբեւ կրօնաւոր կը տեսնուի Եւստաթէի
Վանքին մէջ, ըստ Սարգիս գրչի չեռեւ-
եալ յիշատակարանին:

Եւ թուարեւութեան Հայկազեան Տո-
 մարի Պ-երորդի քառասներորդի և տաս-
 ներորդի գրեցաւ և յանկ ելեալ աւարտե-
 ցաւ մատեանս աստուածային, որ կոչի
 Հարցմունք . . . ի մեծ և ի գերահռչակ
 ուխտիս և հրեշտակաբնակ սուրբ մենաս-
 տանիս ի վանս Յեստաթէի Սուրբ Առա-
 քելոյս . . . առ ոտս երջանիկ և երիցս
 երանեալ բազմերախտ հօրս մեր և երկ-
 րորդ արքիաւորչի Հայկազեան սեռի՝
 Գրիգոր քաջ հռետորի և աստուածաբան
 վարդապետի . . . զոր ցանկացեալ սմա-
 ետ գրել որբասնեալ և հեղահոգի, մաք-
 րամիտ և ճշմարտատես Յունան կրօնաւոր
 . . . և մատուցի ընծայ սիրելի և անձկալի
 եղբօրս իմ Յունան կրօնաւորի և բանա-
 սիրի, օգնականութեամբ և կամակցու-
 թեամբ մեծիս իմոյ՝ Գրիգոր աստուածու-
 նակ պուկտի» (Յիշտ. ԺԵ. Դարի, Ա.
 Մասն, թիւ 2):

Յունան 1414 թուին ինքզինքը կ'ո-
 րակէ «սպասաւոր բանի», երբ գրադած
 էր օրինակելով Գ. Տաթևացիի Քարոզ-
 գիրքը Մեծոփայ վանքին մէջ: Ահաւասիկ
 մաս մը իր յիշատակարանէն:

«Արդ, ի թվականիս Հայկազեան տա-
մարիս ՊկԳ, գրեցաւ Գիրք Քարոզու-
թեանս Առաջին Հատորին . . . ի սուրբ
ուխտս Մեծօրայ . . . : եւ գրեցաւ ձեռամբ
անարհեստ եւ անիմաստ, մեղսամած, մատ-
նագեղեւ, սխալագիր գրչի սոսկ տէր
Յուենան, որ զանուն եւ զաստիճան առի-
ինքնիշխան կամօք եւ ի գարծոյն բողոմ
հեռաւորութեամբ յետս կացի . . . : Արդ
աղաչեմ զհանգիպողսդ սրտի մտօք յիշել
. . . եւ զիս զեղկելի անձն, որ ի վայելս
իմոյս գրեցի. եթէ Տէր տօցէ, եւ յիշա-
տակ անջինջ յետ մեր եւ մերոցն ծնողաց՝
Առաքելին եւ Ամինիային» (Յիշտ. ԺԵ.
Դարի, Գ. Մասն, թիւ 445):

Վերոգրեալ յիշատակարանը կը վերա-
բերի Քարոզագրքի Առաջին Հատորին:
Արդեօք Քարոզագրքի Երկրորդ Հատորին
կը պատկանի հետեւեալ յիշատակարանը,
որ նոյնպէս գրուած է 1414 թուին:

Յիշեալիք «Զբողում մեղօք զառած-
եալս եւ ի հոգոց աշխարհի տառանեալս՝
զՅուենան անարհեստ գրիչ եւ զանպիտան
սպասաւոր բանի, որ գրեցի սա ի վայե-
լումն անձին իմոյ տառապելոյ» (Յիշտ.
ԺԵ. Դարի, Ա. Մասն, թիւ 180):

Յուենան գրիչ Ճոշոցի մը նրկըսող
մասը գրած է 1420 ին, ըստ հեռահալ յի-
շատակարանին:

«Աւարտեցաւ քրիստոսանիմն, տուա-
քելաշէն, մարդարէախսւս այս կտակ
յամի ութնարեւրորդի վացսնորորդի և
իննորորդի թըւականութեան Հայկոսգեան
ազգիս տոմարի . . . ձեռամբ յոգնապայ-
ծառ և ջանաւորե ու աէր Սարգսի, և ներ-
գլեհալ և մեղսամակարթ և փծուն գրչի
Յուենանի որպէս և գիրդ ցուցանի, ի ին
տեառիցն ի վար» (Յիշտ. Ժե. Դարի. Ա.
Մասն, թիւ 273):

ԳԱԼՈՒՍՏ ՎԱՐԴԱՊԵՏ

(1370 ? – 1425 ?)

Գրիչ Գալստատ վարդապետ ծնած է ժ. Դարու երրորդ քառորդին վերջերը հուսնաբար: Զինքը կը անսնենք եւստաթէի վանքը, 1403 ին. երբ բանի սպասաւոր, աշակերտակից Սիմէոնի հետ կ'ընդօրինակէ Հարցմանց Դիրք մը: Ահաւասիկ հաստատած մը իր յիշատակար նէն:

«Գրեցու տառս տատաւածային, որ կոչի Հարցմունք. և է նոր հատորն, ի թվարհրութեան Հայոց մեծաց ՊՄԲ տուժարի. ի վանս հռչակաւոր՝ յեւստաթէի Սուրբ Առաքելոյս, առ սասքսջ հսկողորի և բանիբուն վարդապետի Դրիգոր անուն հսկողի. նաև տառիս վերծնողի . . . Մեք աշակերտք բանի՝ Սիմէոն սպասաւոր և Գալստատ պիտակ վարդապետ, գրեցաք զսա ի վայելումն» երեմիա սրբասէր քահանայի (Յիշտ ժե Դարի, Ա. Մասն, թիւ 34):

Գալուստ վարդապետի գրչէն ծանօթ է Շարական մը, զոր օրինակած է, 1406 ին, ինչպէս կը ցուցնէ իր յիշատակարանը:

«Արդ գրեցաւ հղանակաւոր տառս և լուսազարդ երգարանս, ի թուականիս Հայոց ՊՄԵ . . . առ ոտս մեծ և ամենեք ջանիկ դիտապետիս Հայոց, որ է անուանակիր արփիաւորչին . . . ձեռամբ յոգնամեղ և ապիկար գրչի Գալուստ պիտակ սպասաւորի» (Յիշտ. ԺԵ. Դարի, Ա. Մասն, թիւ 64):

Թովմայ Մեծոփեցի, 1410 ին, ազնիւ տողեր գրած է Գալուստ վարդապետի մասին:

«Այլ և զվարդապետն Գալուստ, զսիրելի աշակերտ սուրբ հօրն մերոյ մեծին Գրիգորի որ պատճառ հղև մեզ բազում բարութեան և զօրինակն շնորհաց մեզ յերկրէ հեռաստանէ, աղաչեմ սիրովն Յիսուսի յիշել զնա մաքուր աղօթիւք» (Յիշտ. ԺԵ. Դարի, Ա. Մասն, էջ 104):

«Շնորհօք բարերարին Աստուծոյ ևս մեղապարտս ի մանկունս եկեղեցւոյ, պիտակ անուն վարդապետս Թովմա, ստացայ զերկրորդ հատոր Քարոզգրոցս . . . ձե-

ռամբ հրախառնորի և մեր ըստ հոգւոյ և
ըստ մարմնոյ բարեկամի, քրիստոսակիր
առն Աստուծոյ, Դաւուստ Վարդապետի»
(Յիշատ. ԺԵ. Դարի, Ա. Մասն, էջ 105-6):

ՅԱԿՈԲ ՎՐԻ. ԱՍՊԵՍԸ ԵՎՑԻ

(1370 ? - 1425 ?)

Ծնած է ԺԴ. Դարու հրրորդ քառոր
դին հաւանաբար: Ձինքը կը տեսնենք
Տաթևի վանքը 1408 ին, երբ օրինակած է
Դրիգոր Տաթևացիի Քարոզգիրքը, որուն
յիշատակարանին մէջ կ'ըսէ.

«Եւ ես Յակոբ, անուամբ պետի,
օրինաւոր գործով թերի,
մականունըս Ասպիսընկցի,
այրի հոգի ուղղորմելի»: ...

«Դրեցաւ ի վանքս Եւստաթէի, յեր-
կրիս Սիւնեաց, առ ոտս հանճարեղ և բա-
նիբուն վարդապետի Դրիգորի . . . թիւն
ՊԾէ» (Յիշատ. ԺԵ. Դարի, Ա. Մասն, թ. 85):

Յակոբ Վարդապետ կը գտնուէր Աս-
պիսընկոյ վանքը, 1411 ին, երբ գնած է

Բաղդիրք մը (Յուզակ Ձեռ. Ս. Յակոբ-
եանց, Ը. Հատոր, էջ 39):

Երեք տարի յետոյ, 1414ին, կը
գտնուէր Սուհարայ վանքը, ուր օրինա-
կած է Հաւաքածոյ մը Գրիգոր Տաթեացիի
երկերէն: Յիշատակարանին մէջ կ'ըսէ.

«Այլ և զՅակոբ խնդրող բանի, որ
մականուն Ասպիսընկեցի կոչի, և զհղ
բայրն իմ Անգրէաս կուսակրօն քահանայ,
յիշեալիք ի մարտափայլ յաղօթս ձեր, զի
խիստ գգուարու գրեցի, ի թվի ՊԿԳ. ամի»
(Ձեռ. վիեննայի, թիւ 593):

Յոհաննէս Մսկացի Անձնապատ մե-
նաստանին մէջ կը գրէ 1420ին.

«Բայց իմ դեգէրեալ աստ, առ աստ
երջանիկ բարունապետիս Յակոբայ՝ Աս-
պիսըքցի կոչեցեալ, վայելչատիպ, չա-
փահասակ, բարիոք տլեաւք ծաղկեալ,
զուարճախաւս, [առ]ատարան, [արգիւ]-
նաւոր և ուսուցանող ան[ձան]ձրոյթ, յոյժ
գութ ունիլով առ գրոց աշակերտսն»
(Յիշա. Ժե. Դարի, Գ. Մասն, էջ 354):

Երեք տարի յետոյ, Թումայ գրիչ
Սպասկերացի, Բերդավանք գիւղին մէջ,
տրձանագրած է սա տողերը.

«Եւ ապա իմ եկեալ յերկիրս Ռչտուն-
եաց, ի գերահռչակ ուխտն Անձնապատ
կոչեցեալ. և ոչ տային դադար գրելոյ
կամ կարդալոյ. զի անկանք ի մէջ տգի-
տաց և անվ սրժ և անկրօն կրօնաւորաց . . . :
Երբ ոչ գտաք հանգիստ ոտից մերոց՝
ցրուեցաք յիւրաքանչիւր տեղիս՝ վարդա-
դապետք և աշակերտք: Եւ իմ եկեալ առ
Ժնոդն իմ, ի գեղն որ կոչի Բերդավանք,
և աստ վճարեցի զգիրքս . . . : Եւ ոչ տայ
դադար միտքս իմ ինձ, զի կամիմ դառ-
նալ առ վարդապետն իմ Յակոբ, զի կամի
խիստ զուսուցանելն, և է վայելչատիպ,
չափահասակ, բարիոք ալեօք ծաղկեալ,
զուարճախօս, առատաբան, արդիւնաւոր
և ուսուցանող անձանձրոյթ . . . » (Յիշտ.
ԺԵ. Դարի, Ա. Մասն, էջ 302):



ՍԻՄԷՈՆ ՐԱԲՈՒՆԱՊԵՏ

(1370 ? - 1428)

Սիմէոն Վարդապետ Սիւնեցի ծնած է ժ. Դարու երրորդ քառորդին վերջերը հաւանաբար: Ժ. Դարու վերջին տարին (1400) գինքը կը տեսնենք Տաթևի Վանքը իբրև աշակերտ և գրիչ: Կուտանք հասնած մը իր օրինակած Մաշտոցի յիշատակարանէն:

«Արդ, գրեցաւ աստուածային գանձարանս, որ կոչի Մաշտոց և Քահանայաթաղ, ամենայն սրպիսութեամբ, ի սուրբ ուխտս և յաթոսս Եւստաթէի Սուրբ Առաքելոյս . . . ի յառաջնորդութեան ուխտիս քաջ և արի Հսկողի, բարունեաց պետի, և ընդդիմի հարկանողի սեղափռութեամբ և ամենայն ճարտասանութեամբ՝ հերձուածող սցն գնդի . . . ձեռամբ մեղսամակարթ . . . գրչի Սիմէոնի և պիտակ աշակերտի . . . Գրեցաւ ի թուարկութեանս Հայոց Պիթ» (Յիշատ. ժ. Դարի, թիւ 786):

Յաջորդ յիշատակութիւնը կու գայ
1403 թուականէն, այսպէս.

«Գրեցաւ տառս աստուածային, որ
կոչի Հարցմունք, և է նոր հաւորն, ի
թվաբերութեան Հայոց մեծաց ՊԾԲ տու-
մարի, ի վանս հռչակաւոր՝ յԵւստաթէի
Սուրբ Առաքելոյս, առ ոստ քաջ հռետորի
և բանիրուն վարդապետի Գրիգոր անուն
Հսկողի, նաև տառիս վերծանողի . . . : Եւ
մեք, աշակերտք բանի, Սիմէոն սպասա-
ւոր և Գոլուստ պիտակ վարդապետ, գրե-
ցաք զսա . . . » (Յիշտ. ԺԵ. Դարի, Ա.
Մասն, թիւ 34):

Երեք տարի ետքը կը գրէ սա տողերը.

«Արդ, գրեցաւ սա ի թվիս Հայոց
ՊԾԵ. ի սուրբ աթոռս Եւստաթէի Սուրբ
Առաքելոյս, ձեռամբ բաղձամեղ և սու-
տանուն Սիմէոնի պիտակ բանասիրի, ա-
շակերտի նորին Գրիգորի վեհափառի՝
առնողի գրոյս» (Յիշտ. ԺԵ. Դարի, Ա.
Մասն, թիւ 63):

Թումայ գրիչ, 1410ին, Ս. Նշան Ա-
նապատին սէջ կ'արձանագրէ հետեւեալ
տողերը:

Արդ, գրեցաւ սա ի թուիս Հայոց
ՊՄԹ, և սկսեալ ձեռամբ մեծին մերոյ
արքիաւորչի և Հսկողի, որ յայսմ ամի
փոխեցաւ առ բողծելին իւր մեծ հրաշիւք
... և աւարտեցաւ յԱնապատս, որ կոչի
Սբ. Նշան, առ ոպս նորաքոզրոջ բարու-
նապետիս, որ կոչի Սիմէոն, աշակերտ
արարողի գրոցս, որ յայսմ ամի զայս
գիրքս դաս ասէր, ձեռամբ բազմամեղ և
փծուն գրչի Թումայի, պիտակ և անար-
ժան և արուար փափաքողի կաթին ան-
խարդախի (Տուցակ Զեռ. Ս. Յակոբեանց,
Գ. Հատոր, 1969, էջ 294):

Ծանօթացած ան կը տեսնուի եղի-
վարդի վանքը իբրեւ թաթունապետ, ուր
Քրիզոստոմ կրօնաւորս և աշակերտեալ ման-
կունս եկեղեցւոյ ժողովեալ յուսուեցանել
զհինն և քնոր մատեան աստուածաշունչ
գրոց, գնուրք և զարտաքին փխիսոփա-
յութիւն՝ ամս տասնչ (Յիշտ. ԺԵ. Դարի,
Ա. Մասն, թիւ 636, էջ 561):

Նոյնը կը հաստատէ Դրիգոր գրիչ,
1415ին:

Արդ, թաթունապետ մի գովելի, ըն-
տըրեալ յազգէս Հայկազենի, որ գաւառաւ

էր Սիւնեցի, և բնակութեամբ էր յաթո-
ռոյն եւտաթէի, որ Սիմէոն անուն կոչի,
յողսրմութենէ Սուրբ Հոգւոյն եկեալ ի
դաւառս Արարատեան և դաս հրամեալ
բազում ժամանակ, որպէս ի Քրիստոսէ
շնորհեալ մեղք (Յիշտ. ԺԵ. Դարի, Ա.
Մասն, թիւ 182):

Սիմէոն Վարդապետի ուրիշ մէկ յի-
շատակարանք կը տեսնենք 1416 ին:

«Զվերջինս ի ծնունդս եկեղեցոյ . . .
զգծող վերջին քանից և դարձոց Աստուա-
ծարան Աւետարանչի, ի թուիս 945, զՍի-
մէոն Վարդապետ, պարտական բիւր քան-
քարոյ, յիշեցիք որով յոժարութեամբ»
(Յիշտ. ԺԵ. Դարի, Ա. Մասն, թիւ 178):

Մոկացի Յովնաննէս գրիչ 1420 ին կը
վկայէ թէ Եղիվարդի մէջ Սիմէոն բարու-
նապետ ճաննանգիտ տքնութեամբ և ան-
դադար ընթերցմամբ աշխատի ի դիրս
աստուածային հնոյ և նորոյ կտակարա-
նաց, այլ և նրբից և արտաքնոց, առա-
տապէս լիացուցանէ զմանկունս, որ առ
սա հաւաքեալ կան» (Յիշտ. ԺԵ. Դարի,
Գ. Մասն, թիւ 473):

Իւր ծերութեան օրերուն կը պատկանի
հետեւեալ յիշատակարանը՝ գրուած 1423ին։

Աղատարեցաւ Մեկնութիւնս Եւթանե-
ցունց Թղթոցն կաթողիկէից ... Ի թվիս
Հայոց ՊԶԲ, զպապական գրելով։ Արգ, յե-
րեապ անկեալ ազաչեմ ... յիշեցիք յաւ-
ժաք կամաւք և արտի մտաւք զհոգացելալս
ի վերջին ծայրս աւուրց, մաշեալ և ա-
պականեալ, բազմապատիկ և սաստիկ մե-
ղաւք, զիս՝ զԱթմէոն վարդապետ, բիւ-
րապատիկ պարտական յամենայն տաղան-
դաք և քանքարաց» (Արշ. մե. Դորի,
Ա. Ասան, թիւ 326)։

Մ Ա Ր Գ Ի Ս Գ Ր Ի Չ

(1370 ? - 1430 ?)

Սարգիս գրիչ ծնած է ժն. Գարու
երրորդ քառորդին վերջերը հաւանաբար
Որդին էր Թամամի, Չինքը կը տեսնենք
Տաթևի վանքը, 1401 թուին, ուր կ'ըն-
դորինակէ Հարցմանց Գիրք մը: Կ'արտա-
գրենք մաս մը իր յիշատակարանէն:

« Ի Թուարեթութեան Հայկազեան տո-
մարի Դ - երրորդի քառաներորդի և ասո-
ներորդի գրեցու և յանկ ելեալ աւարտե-
ցաւ մատեանս աստուածային, որ կոչի
Հարցմունք . . . ի մեծ և ի գերահռչակ
ուխտիս և հրեշտակաբնակ սուրբ մենաս-
տանիս, ի վանս Յեւստաթէի Սուրբ Ա-
ռաքելոյս . . . առ ոտս երջանիկ և երիցս
երանեալ բազմերախտ հօրս մեր և երկ-
րորդ արփիաւորչի Հայկազեան սեռի՝
Գրիգոր քաջ հռետորի և աստուածաբան
վարդապետի . . . Արդ, աղաչեմ . . . յի-
շեցէք ի յերկնաթռիչ յաղօթս ձեր . . .
զԹամամ զծնողն իմ . . . և զիս՝ զանար-

ժանս յամենայնի . . . զՍարգիս մեղա-
պարտ» (Յիշտ. ժե. Դարի, Ա. Մասն,
թիւ 2):

ՍՏԵՓԱՆՈՍ ՎՐԴ. ԹԱԻՐԻՋԵՑԻ

(ժԴ. — ժե. Դար)

Թողմա Մեծոփեցի իբրև Դրիգոր Տա-
թևացիի աշակերտ կը յիշէ «Ստեփանոս
ի Թաւրիզոյ» (Պատմութիւն, էջ 51): Իր
մասին մեզի հասած տեղեկութիւնները
քիչ են: Ծնողաց անուններն էին Բէհնամ-
շահ և Ազիզ — Մալիք: Իր գրչէն յայտնի
են երկու յիշատակարաններ՝ 1404 և 1410
թուականներուն գրուած:

1. — Թի. 1404. — Ո՛վ դասք լուսե-
րամք . . . յիշոցէք յամենառատ և հոգիա-
րուղիս գթասիրեալ ողորմութեանդ. ձերոյ
զստացաւդ սուրբ գրոյս աստուածաբանդ.
բանիս ի տիեզերալոյս բաբունաց պետի.
Դրիգորի վարդապետի Մեկնութիւն սուրբ
աւետարանչացս՝ զՍտեփաննոս վարդապետ
զմայրաքաղաքին Թաւրիզու, և զփոխե-

ցեալն ի Քրիստոս զհայրն իմ զԲէննամ շահն, և զմայրն իմ զԱզիզ-Մալիքն . . . :
 Զոր մերոյ հասեալ ի քարոզութիւն ի մայրաքաղաքս ի Շամախի և դառաւ ըզտեառն մեծարեալ սգւոյ զանկողնպանի զգանձս և զնեցաք զսուրբ գիրքս զայս ի Շ (500) դահեկան, ի վարժունք մեզ և բազմաց յաւերամից, Քանզի Պղիտաքոս իմաստասէրն հրամայէ յիբում բանին, եթէ՝ Ճանապարհորդք ի տունս և ի հայրենիս իւրեանց փութան, իսկ իմաստունք ի հանճար և յիմաստութիւն . . . : Գրեցաւ ՊԾԴ (1404), արէ Ե (5) և մորա ժԴ (14).
 — Յիշտ ժԵ. Դարի, Ա Մասն, էջ 32-33:

2. — ԹԿ. 1410 — Նուառտ և ներգեւեալ սգի Սահփաննոս լալուկ վարդապետս Թալրէժեցիս առի զայս Աւետարանս Շ (500) դահեկան, որ էլ մարդոյ հաղ ու դաւէ վասն հետ Արրահամ աբեղին չկայ, Աւետարանս իւրն հաղ ու մուլք է: Ով որ խօսի կամ դաւէ առնէ դատի յԱստուծոյ և ամենայն սրբոց նորայ, ի թվ. ՊԾԹ (1410), յարաց ժԹ (19), մայիս ԻԶ (26) գրեցաւ հաստատ բանս. — Յիշտտեղաւրանք ժԵ. Դարի, Ա. Մասն, էջ 109:

ԳՐԻԳՈՐ ԱԲՂ . ԳՈՐԵՑԻ

(1370 ? - 1430 ?)

Գրիչ Գրիգոր Աբղ. Գորեցի ծնած է ժԴ. Դարսւ հրրարդ քառորդին վերջերը հաւանաբար: Հօրը անուէն էր Լուսաբեր, մայրը կը կոչուէր Թամթա խաթուն: Ան իր անձին համար 1406 ին, գրած է Հարցմանց Գիրք մը, Սիմէոն Վարդապետի և Յաւնան աշակերտի շնորհած օրինակէն: Ահաւասիկ հասուած մը իր յիշատակութեանէն:

«Աբղ. գրեցաւ սուրբ գանձարանս տատուածային որ կոչի Հարցմունք, Գրիգորի քաջ ախոյանի և արի հռետորի, ընդդէմ հերձուածողացն դասուց ի սուրբ և գերանուշակ ուխտս Եւստաթէի Առաքելոյս . . . ոտ ստս երջանիկ բարունապետիս Գրիգորի վերոյ գրելոյս . . . ի թվականիս Հայոց ՊՄԵ . . . ձեռամբ բազմամեղ և անյարմար գրչի Գրիգոր արեղայի վրացաանցի, որ է գեղաքաղաք Գորի, ի վայելումն իմոյ և յիշատակ ծնողաց իմոց» (Յիշատ. ԺԵ. Դարի, և Մասն, Թ. 61):

ՅՈՀԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ

(1370 ? – 1430 ?)

Գրիչ Յոհանէս վարդապետ ծնած է ժԴ. Դարի երրորդ քառորդին վերջերը հաւանաբար: Ծնողքը կը կոչուէին Խոր. իշխան և Հաճաթ: Ան 1407ին օրինակած է Գրիգոր Տաթևացիի Քարոզգիրքը, որուն յիշատակարանէն կ'առնենք մաս մը:

«Արդ, գրեցաւ Գիրքս Քարոզից . . . ձեռամբ Յոհանիսի վարդապետի . . . : Այլ և զձեզ աղաչեմ, յիշման արժանի առնէք զհայրն իմ զԽորիշխան, և զմայրն իմ զՀաճաթ . . . : Արդ, վարդապետն մեր Գրիգոր բարունապետ, որ հսկի յաթոռ վարդապետութեան . . . զի մինչ ի յայս ժամանակս ոչ կայր Քարոզգիրք մեզ, և սորա Բ Հատոր Քարոզգիրք չինեալ, որ զտարին կատարէ . . . , [Գրեցաւ] ի թվականիս Հայոց ՊԾԶ . . . » (Յիշատակարանք ժե. Դարի, Ա. Մասն, թիւ 79):

Թ Ո Ւ Մ Ա Յ Ա Յ Ե Ղ Ա Յ

(1370 ? - 1430 ?)

Գրիչ Թուժայ արեղայ ծնած է ԺԴ. Դարու երրորդ քառորդին վերջերը հնթադրաբար: Որդին էր Մարտիրոսի և Արև տիգինի: Զինքը կը տեսնենք Ս. Եւստաթէի վանքը, 1407ին, ուր կ'ընդօրինակէ Հարցմանց Գիրք մը: Ահաւասիկ մէկ հատուած իր յիշատակարանէն:

«Ի Թվարերութեան Հայկազեան տոմարի Պ-երորդի, Ծ-երորդի, Զ-երորդի, գրեցաւ և յանկ ելեալ աւարտեցաւ մատենաս աստուածային, որ կոչի Հարցմունք . . . ի մեծ և գերահռչակ ուխտիս և հրեշտակարնակ մենաստանիս, ի վանս Եւստաթէի Սուրբ Առաքելոյս . . . առ ռոս երջանիկ և երիցս երանեալ բաղճերախտ հարս մեր և երկրորդ արփիաւորչի Հայկազեանս սեռի, Գրիգոր քաջ հոեաորի և աստուածաբան վարդապետի . . . Արդ ես Թուժայ, տկարս և անվարժս, ոչ գոլով

հմուտ արուեստիս, պիտակ աշակերտ,
ապուլնեալ յայն, որ զտկարս զօրացու-
ցանէ, տկար մարմնով և դողդոջ ձեռք
սկսեալ, ազօթիւք սրբոց և ողորմու-
թեամբն Աստուծոյ աւարտեցաւ . . : Զտար-
տամս ի բարեաց գործոց, զվարանեալս ի
յամէն կողմանց, զմեղուցեալ գծոցս, ըզ-
թումայ թափառականս, ով սուրբ եղ-
բարք, յիշեցէք ի զենեալ Կառն, և ըզ-
ծնողսն իմ զՄարտիրոսն ի Քրիստոս
հանգուցեալ, և զԱրեւ-տիկին՝ բազմե-
րախտ մայրն իմ, Աստուած զձեզ յիշէ,
ամէն» (Յիշտ. Ժե. Դարի, Ա. Մասն,
թիւ 74)։

Երեք տարի յետայ ան կը գտնուի Ս.
Նշան Առաքաւոր, ուր կ'օրինակէ Դրիգոր
Տաթեացիի Մեկնութեանց Ժողովածուն։
Կուտանք մաս մը իր յիշատակարանէն։

«Արդ գրեցաւ սա ի թուին Հայոց
ՊԵԹ, և սկսեալ ձեռամբ մեծին մերոյ
արքիւսեւորչի և հեկողի, որ յայսմ ամի
փոխեցաւ առ բազմալին իւր մեծ հրաշխւք
. . . և աւարտեցաւ յԱնապատս, որ կոչի
Սբ. Նշան, առ ոսոս սարաբողբոջ բաբու-
նապետիս, որ կոչի Սիմէոն, աշակերտ

արարողի գրոցս, որ յայսմ ամի զայս
գիրքս դատասէր, ձեռամբ բազմամեղ և
փծուէն գրչի Թուճմայի, պիտակ և անսր-
ժան և արուպ փափաքողի կաթին անխար-
դախի» (Յուլցակ Զեռ. Ա. Յակոբեանց,
Դ. Հատոր, էջ 294):

ՄԽԻԹԱՐ ԻԱԲԵԻՆԱՊԵՏ

(1370 ? – 1440 ?)

Մխիթար Վարդապետ ծնած է ԺԴ.
Դարու երրորդ քառորդին վերջերը ևն-
թագրաբար: Իր ուսումը լրացնելէ ետք
մօտ քառորդ դար (1415 – 1437) պաշտօ-
նավարած է Տաթևի վանքին մէջ:

Յովանէս Գրիչ կը յիշէ զինքը 1415ին:

«Արդ, գրեցաւ . . . ի սուրբ և ի գե-
րահռչակ ուխտս և յականաւոր աթոռս
Եւստաթէի Սուրբ Առաքելոյս . . . ի աե-
ղապահութեան աթոռոյս վարժապետին
Մխիթար Վարդապետի, ձեռամբ ապիկար
և թարմատար գրչի Յովանէս Վարդա-
պետի . . . ի թվիս Հայոց ՊկԴ» (Յիշտ.
Ժե. Դարի, Ա. Մասն, թիւ 736):

Մովսէս գրիչ կը յիշէ զինքը՝ հաւանաբար 1416 ին։

«Արդ գծեցաւ սա ի թուին Հայոց Պ[Ծ]Ն (1406), յիշխանութեան պարոն Սմբատին և որդւոց նորին Բէշքէնին և Իւանէին, ի հրեշտակաքնակ ուխտս Եւթտաթէի Սուրբ Առաքելոյս, առ ռոս վարդապետին Մխիթարայ, որ մխիթարիչ է հոգւոց ծարաւելոց, որ ծարաւի են բանին շնորհաց, յընտիր և ի ստոյգ աւրինակէ լուսաւոր վարդապետին Գրիգորի, զոր ի մեծ վարդապետին վարդանայ և այլոց սրբոց հաւաքեալ և կոչի լուծմուք Սողոմոնի, և շնորհաց մանկանց Սիոնի, որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի . . . » (Յիշտ. ԺԵ. Դարի, Ա. Մասն, թիւ 62)։

Սոյն յիշատակարանի թուականին տասնաւորը պատուուած է հրատարակիչը կը կարծէ թէ պէտք է լինի Ծ (50)։ Բայց նկատելով որ 1406 թուին Գրիգոր Տաթևացի ողջ էր, և «որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի» մաղթանքը կը պատշաճի հանգուցեալ անձի մը, նախընտրելի կը սեպենք պատուուած տասնաւորը Ծ ի տեղ կ հաշուել, որով կը ստա-

նանք 1416, իբրեւ թուական սոյն յիշատակարանին:

Թուժայ Կաֆայեցի զինքը կը յիշէ 1422 ին:

«Արդ, եղև զրաւ սորայ ի վանս Եւստաթէի Սուրբ Աւաքելոյս, առ ոտս քաջ րաբունապետիս մերոյ Մխիթարայ . . . ի թուականութեանս Հայոց ՊՀԱ, ձեռամբ անիմատս և համբակ գրչի Թուժայի» (Յիշտ ժե. Դարի, Գ. Մասն, թիւ 479):

Երեք տարի ետքը, 1425 ին, Կարապետ գրիչ ևս կը յիշէ մեծ րաբունապետ Մխիթարը:

«Եւ արդ գրեցաւ սա, ձեռամբ ախմար և փցուն գրչի Կարապետ բանի խնդրողի . . . ի թվականութեանս Հայոց ՊՀԴ, ի սուրբ ուխտս Տաթևի . . . առ ոտս մեծ րաբունապետին Մխիթարայ» (Յիշտ. ժե. Դարի, Ա. Մասն, թիւ 355):



ՅՈՎ ՀԱՆՆԷՍ ԿՈՂՈՏԻԿ

(1370 ? - 1443)

Յովհաննէս Կոլոտիկ կամ Գօլօտինց ծնած է ժԴ. Դարու երկրորդ կիսուն մէջ՝ Կիւմյուքի մօտաւորապէս։ Ուսումը ստացած է Գրիգոր Տաթևացիի մօտ, հետո՝ Նալով յատկապէս կրօնական գիտելիքներու և գրչութեան արուեստին։ Անոր մահէն ետք գացած է Հերմոնի վանքը, ուր երկար տարիներ վարած է վանահայրի և ուսուցչապետի պաշտօն (1413 - 1443), իր աշակերտներէն յիշուած են Դաւիթ, Սահփանոս և Մարկոս վարդապետներ։

Յովհաննէս Հերմոնեցի մին էր իր ժամանակի նշանաւոր և ազդեցիկ վարդապետներէն։ Իր ծերութեան օրերուն, գլխաւոր դերակատարներէն մին հանդիսացած է Կիրակոս Վիրապեցիի կաթողիկոսացման (1441) և ապա գահընկէցութեան արարքներուն մէջ (1443)։

Իբրև գրող, Յովհաննէս Կոլոտիկ ձգած է քանի մը երկեր, որոնք մինչև

հիմա կը մնան անտիպ: Ատոնց գլխաւոր-
ներն են,

1. — Մեկնութիւն Եսայեայ, զոր
գրած է 1415 ին:

2. — Լուծմունք Գրոցն Ս. Դիոնէ-
սիոսի:

3. — Քարոզք. — Հայ Գրողներ, էջ
423-424:

ՄԿՐՏԻՉ ՎՐԴ. ՆԱՀԱՊԵՏԵՆՑ

(1373 - 1445 ?)

Մկրտիչ Վրդ. Մեծօփեցի ծնած է
1373 ին: Որդին էր Նահապետի և Թան-
սուղի: Մին էր Մեծօփեցի Թովմայ Վար-
դապետի աշակերտակիցներէն: Քանի մը
տող այս վերջինէն, գրուած 1435 ին:

[Յիշեցիք] « և զհամշիրակ և զաշա-
կերտակից եղբայրս իմ, զպատճառս բա-
ղում բարութեան, զճգնաւոր և զաստուա-
ծաբան վարդապետս Մկրտիչ, և զհայրն
իւր Նահապետ, և զամենայն արեան մեր-
ձաւորսն, որ խրատէ հոգեւոր և մարմնա-
ւոր խրատով զմեզ և զամենայն ուխտս

միաբան» (Յիշտ. ԺԵ. Դարի, Ա. Մասն, էջ 451):

Մկրտիչ Վարդապետի գրչէն յիշատակարան մը, գրուած Մեծոփայ Վանքը, 1418ին, կ'ըսէ.

«Որք ընթեռնուք կամ աւրինակէք յիշեցէք ի Քրիստոս զսուրբ հայրն մեր զմեծ րարունապետն զԱրթուռն անուն, զերկրորդ Աստուածաբանն, զբազմերջանիկն, զազգատասէր և զհեղահոգին . . . : Դարձեալ աղաչեմ զամենեւեան՝ զմեղսամած գրիչս զՄկրտիչ պիտականուն վարդապետ, և զծնաւդսն իմ՝ զՆահապետ և զԹանսուղ . . . յիշեցէք ի մաքրափայլ յաղութս ձեր» (Յիշտ. ԺԵ. Դարի, Ա. Մասն, թիւ 188, էջ 178):

Յաջորդ տարին (1419) գրած է սուրիշ յիշատակարան մը, Յուսկան Որդոյ Վանքը, որմէ կ'առնենք քանի մը տող:

«Զլիս ամենայն չարութեամբ և ըզպակասեալս յամենայն բարութեանց, ի գործնական և ի տեսական առաքինութեանէ, զպիտականուն վարդապետ Մկրտիչ, մականուն Նահապետանց, միով Տէր

ղորմայիւ յիշեցէք ի Քրիստոս Աստուած»
(Յիշտ. ԺԵ. Դարի, Ա. Մասն, էջ 254):

Քանի մը տարի ետքը, 1426 ին, դարձեալ Մեծոփայ վանքին մէջ կը յիշատակագրէ.

«Արդ, յերեսս անկեալ պաղատիմ . . . յիշեսջիք . . . զպիտականուն վարդապետս Մկրտիչ, և զծնողքն իմ զնահապետ . . . որ ստացայ զսա ի Սուրբ Քաղաքն Երուսաղէմ, և բազում ահիւ և դողութեամբ ի տեղս հասուցի, վասն այն յուսոյն, որ գիրս ի դաստուն մտանէ և ի վարդապետաց և ի գրոց աշակերտաց ձեռն մնայ» (Յիշտ. ԺԵ. Դարի, Ա. Մասն, թիւ 383: Զեռ. Երևանի, թիւ 1419):

Մեծոփայ վանեցի Մկրտիչ վարդապետի յոյսը իրականացած է բարեբախտաբար, ինչպէս կը վկայէ Թովմայ Մեծոփեցի. «Եւ ես մեղապարտս . . . դասիւ զգիրս ի դուրս ելի ի ՊԶԶ Թվականի» (Յիշտ. ԺԵ. Դարի, Ա. Մասն, թիւ 383):

ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

(1375 ? - 1430 ?)

Մատթէոս բարունապետ ծնած է ԺԴ. Դարու երկրորդ կէսին մէջտեղերը հաւանարար: Ան կը յիշուի իբրեւ աշակերտ «մեծի հռետորին Գրիգորի», և եպիսկոպոս Կաֆայի, 1423 թուին:

Երեանի թիւ 2629 ձեռագրին յիշատակարանը կը սկսի այսպէս.

«Ի հայրապետութեան տեառն Պաւղոսի, և ի յառաջնորդութեան հռչակաւոր և աստուածապահ քաղաքիս՝ արի և քաջ բարունապետիս Մատթէոս վարդապետի, որ է ժողանդ և աթոռակալ և աջորդ գլխայն համայնի Հայոց տեառն տէր Պաւղոսի կաթողիկոսի ամենայն Հայոց» (Յիշատակարանք ԺԵ. Դարի, Ա. Մասն, թիւ 325):

Գրիչ Ստեփանոս Ախալցըխացի կը գրէ 1423 ին.

«Եւ արդ եկեալ մտի յաստուածապահ քաղաքն Կաֆայ, և հանդիպեցայ մեծի-

մաստ արքայիսկոպոսին տէր Մատթէոսի
աշակերտի մեծի հռեաորին Գրիգորին
(Յիշտ ժե. Դարի, Ա. Մասն, թիւ 329):

Նոյն թուին, գրիչ Քրիստոստուր և
սւնի հեռեեալ յիշատակութիւնը.

Այլ յեպիսկոպոսութեան հանճարեղ և
իմաստուն հռեաորի՝ Մատթէոսի վարդա-
պետի, ի թուականութեան Հայոց ՊՀԲ
(նոյն, անդ):

Ս Ա Ր Գ Ի Ս Գ Ր Ի Չ

(1375 ? - 1430 ?)

Սարգիս գրիչ ծնած է ԺԴ. Դարու
երկրորդ կէսին մէջտեղերը հաւանաբար:
Որդին էր Մարտիրոսի և Թամթայի:
Զինքը կը տեսնենք նախ Սատթէի վան-
քը, ուր սկսած է օրինակելու Գրիգոր
Տաթեացիի Հարցմանց Գիրքը, զոր ապա
աւարտած է Մեծոփայ վանքը, 1409ին:
Ահաւասիկ մաս մը իր գրած յիշատակա-
րանէն:

Արդ, գրեցաւ աստուածային այս
մատեան ի յաւարտումն կատարման եւթն

և տասներեակ յորելենին և յաւելեալ
 ութերորդ ամի յարեթական տոմարի, որ
 է ՊԾԸ . . . և դրեցաւ Գ. Հատորն ի վանք
 Ստաթէի . . . : Եւ եկն մեծ վարդապետն և
 երկրորդ լուսաւորիչն յերկիրս Քաջբե-
 րունի, ի սուրբ վանս Մեծոփայ, և վասն
 աղաչանաց մերոց . . . ասաց դաս՝ զմեծ
 նահատակն Յոր, և զԽրատն Գրչուծեան,
 և զաստուածաբան Աւետարանն Յոհաննու,
 և արար այլ ևս լուսաւոր բացայայտու-
 թիւն սոցա . . . : Եւ աստ եղև կատարունի
 . . . առ ոտս մեծ վարժապետի, քաջ հռե-
 տորի և անյաղթ փիլիսոփայի, Արթուր
 անուն Գրիգորի, արարողի այսմ սոփերի
 . . . ձեռամբ անարհեստ և անիմաստ,
 սխալագիր գրչի, ամենավերջ և նուա-
 տողի անձին Սարգսի . . . ի յիշատակ
 բարի՝ իմում անձին հիքականի . . . և
 հօրն իմ Մարտիրոսի, և հօրեղբօրն իմ
 Կիրակոսի, և մօր իմոյ Թամթաի . . . »
 (Յիշատակարանք ԺԵ. Դարի, Ա. Մասն,
 Թիւ 91):



ԹՈՎՄԱ ՎՐԴ . ՄԵԾՈՓԵՑԻ

(1378 – 1446)

Թովմա Վրդ . Մեծօփեցի ծնած է վասպուրականի Աղի գիւղը , 1378 ին : Ծնողքը կը կոչուէին Ստեփանոս և Շամշա : Իր ուսումը ստացած է նախ Մեծօփայ վանքին մէջ , Յովհաննէս Մեծօփեցի Վարդապետի մօտ (1385 – 1394) , ապա Սուխարայ վանքը , Սարգիս (+ 1402) և Վարդան (+ 1406) Վարդապետներու ձեռքին տակ : Յետոյ երեք տարի ալ աշակերտած է Գրիգոր Տաթևացիին և անկէ ստացած է վարդապետական աստիճան , 1409 ին , Երևանի մէջ :

Ան իր կեանքին մնացած մասը անցուցած է ուսուցչութեամբ և գրական պարապումներով , ընդհանրապէս Մեծօփայ վանքին մէջ : Եօթը աշակերտներու գաւազան տուած է : Հասցուցած է նաև 24 ընտիր գրագիրներ , այսինքն գրչագրողներ :

Թովմա Վարդապետ տպրած է խռովայոյզ ժամանակներու մէջ և այդ պատճառաւ ստիպուած է յաճախ տեղէ տեղ փախչիլ առանձին կամ իր աշակերտներով միասին:

Ան իբրեւ ժամանակին մեծ վարդապետներէն մին, և կարեւոր մէկ ներկայացուցիչը Տաթևեան Դպրոցին, նշանակելի դեր կատարած է Մայր Աթոռին Սիսէն վերստին էջմիածին փոխադրութեան պատմական ձեռնարկին մէջ:

Մեծոփեցին իր արդիւնաւոր կեանքը կնքած է 1446 ին, Արկուռի գիւղը, ուրկէ մարմինը փոխադրուելով թաղուած է Մեծոփայ վանքին մէջ: Անոր կենսագրութիւնը գրած է իր աշակերտներէն Կիրակոս Բանասէր վարդապետը:

Թովմա Մեծոփեցիի գրական գլխաւոր աշխատութիւններն են,

1. — Պատմութիւն Լանկթամուրայ, տպուած է Փարիզ, 1860 ին: Կը բովանդակէ 55 տարուան պատմութիւն, 1385-1440, և կարեւոր աղբիւր մըն է այդ շրջանին համար:

2. — Պատմութիւն վերանորոգման
Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի,
Կրնայ համարուել նախորդին շարունակ-
կութիւնը: Տպուած է Թիֆլիս, 1892 ին.
— Հայ Գրողներ, էջ 426-427:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԵԶՆԿԱՅԻ

(1380 ? - 1430 ?)

Գրիչ Յովհաննէս եզնկացի ծնած է
ԺԴ. Դարի վերջին քառորդին սկիզբները
հաւանաբար: Զինքը Տաթևի մէջ կը տես-
նենք 1408, 1409 թուականներուն, երբ
կը գրադէր Գրիգոր Տաթևացիի Մեկնու-
թիւններուն ընդօրինակութեամբ: Ահա-
ւասիկ հասուած մը իր յիշատակարանէն,
գրուած 1413 ին:

«Յորոց և ես, յետնեալս յամենեցունց,
Յոհանէս անուանեալս և ոչ ենթակայա-
ցեալս կրանաւոր և կամ սպասաւոր
բանի, տկար մտաւք և տարտամ լեզուաւ
կամեցա հետեւել այսքան բարի արանց,
թէպէտև ոչ է կարողութիւն, զի լինիցիմ
հասոց: Եւ ժամանակս ինչ դեգերեալ եղէ:

առ ոտս երջանիկ րաբունապետին իմոյ
Գէորգայ, և ապա, լուեալ իմ զհամբաւս
համալսարանի տանս Արեւելեան, ցանգացա
և զսոցա տեսանել, և աղօթիւք սրբոց
հասի փափագանացս: Եւ ժամանակս ինչ,
իբրեւ ամս երկուս անցեալ, և մեծ րա-
բունին Գրիգոր փոխեցաւ յաստեացս առ
Քրիստոս, և անմխիթար սուգ եթող հա-
մայն ազգիս: Եւ ի նմին ամի պակասե-
ցաւ և եղբայր և ընկերակիցն իմ Մելքի-
սեդեկ: Եւ ես բազում թախանձանաւք
շրջշրջէի ի տունս Արեւելեան, վասնզի
բազումք յաշակերտաց սորին սկսեալ էին
յարմարել դասատունս ըստ իւրաքանչիւր
կարողութեան . . . : Արդ գրեցաւ և յունկ
ելեալ աւարտեցաւ մատեանս աստուածա-
յին՝ ձեռամբ անարհեստ և փցուն գրչի
Յոհանէս Եզնկացոյ, սիրողի բանի, ի
թուաբերութեանս Հայոց յՊ-երսրդի,
վաթսներորդի երկրորդի (1413) ի տունս
Արեւելեան, մասն ինչ ի վանս Եւստաթէի
Առաքելոյն Քրիստոսի . . . » (Յիշտ. ԺԵ.
Դարի, Ա. Մասն, թիւ 147):

Տաթևացիի մահուան ցաւը խորապէս
յուզած է Եզնկացի Յովհաննէսը, ինչպէս

կը ցուցնեն իր սա տողերը. «զոր ի յի-
շելս իմ զնա աստանաւր՝ ոչ տան թոյլ
վտակք արտասուեացս ուղիղ հայել ի քար-
տէզս կամ ի մելանս» (Յիշտ. ԺԵ. Դարի,
Ա. Մասն, թիւ 147, էջ 141-2):

ՅԱԿՈԲ ԱԲՂ. ԲԵՐԿՐԵՅԻ

(1380 ? - 1440 ?)

Գրիչ Յակոբ արեղայ ծնած է ԺԴ.
Դարու վերջին քառորդին սկիզբները
հաւանաբար: Ծնողքը կը կոչուէին Յու-
սիկ և Ղրէլ: Իրեն ուսուցիչ ունեցած է
«զԳրիգոր մեծ վարդապետն, որ զՔաղ-
ուածոյս է արարեալ և զԹովմայ վար-
դապետ Մեծոփայ»:

Յակոբ արեղայ 1432ին գտնուած է
Երզնասողէմ, ուր ընդօրինակած է գիրք
մը, «որ կոչի Սաղմոսի Քաղուածոյ, զոր
արարեալ է քաջ հռետորին և անյաղթ
փիլիսոփային մեծ վարդապետին Գրիգորի
Որոտնեցւոյ» (Տաթևացւոյ). — Յիշտ. ԺԵ.
Դարի, Ա. Մասն, թիւ 464, էջ 429:

Այդ գրքի իր յիշատակարանին մէջ
կը կարդանք.

« Յիշել աղաչեմք և զհոգեւոր զծնողսն
մեր և զուսուցիչքն՝ զԳրիգոր մեծ վար.
դապետն, որ զՔաղսւածոյս է արարեալ,
և զԹովմայ վարդապետ Մեծոփայ, որ
անչոփ և անեղբ խնամեալ է զիս հոգեւոր
և մորմնուոր » (Յիշտ. ԺԵ. Դորի, Ա.
Մասն, Թիւ 464, էջ 430):

Բերկրեցի Յակոբ արեղայի գրչէն
ծանօթ են ուրիշ ձեռագիրներ ալ, ինչ-
պէս, Աւետարան (1418, Տէր Յուսկայ
Որդւոյ Անապատ). Աւետարան (1422, Ե-
ղեվանք), Շարահնոց (1424, Եղեվանք),
Աւետարան (1425, Տէր Յուսկայ Որդւոյ
Անապատ):

ՄԱՐԳԱՐԷ ՎՐԴ. ՎԱՐԱԳԵՑԻ

(1380 ? - 1450 ?)

Մարգարէ Վարդապետ ծնած է ԺԴ. Դարի վերջին քառորդին սկիզբները հաւանաբար: Եղած է աշակերտակից, Տաթևի մէջ, Մեծօփեցի Թովմայ Վարդապետին, ԺԵ. Դարուն սկիզբները, համաձայն այս վերջինին կողմէ գրուած յիշատակութեաններուն:

«Նաև զՄարգարէ վարդապետ յիշես-
ջիք ի Քրիստոս, որ աշխատեցաւ ի կոկել
թղթիս» (Յիշտ. ԺԵ. Դարի, Ա. Մասն, Թիւ 59):

«Այլ և համշիրակ եղբարցն իմոց ու-
սումնասիրեալ անձանցս, Մարգարէ Վար-
դապետի ... որք եկեալ եմք տարաշխար-
հիկ ի գաւառէ Քաջբերունոյ վասն ուսման
օգտի, և ոչ դիպեցաւ մեզ որպէս կամք
մեր էր, այլ պանդխտութեամբ կացաք ի
միասին ժամանակս ինչ» (Յիշտ. ԺԵ.
Դարի, Ա. Մասն, Թիւ 77, էջ 78):

«Այլ և զաշակերտակից հարքն մեր և
եղբարք, զՄարգարէ վարդապետ . . . ու-
ղաչեմ յիշել ի Տէր սրտի մտաւք» (Յիշտ.
ԺԵ. Դարի, Ա. Մասն, էջ 105):

Մարգարէ վարդապետ հետագային
դարձած է վարադայ վանքի առաջնորդ
և բարունապետ, և պաշտօնավարած է
երեք տասնամեակ (1418–1448):

Այդ մասին իբրև վկայութիւն կ'ար-
տագրենք երկու յիշատակագրութիւն ևս,
առաջինը Նիկողայոս գրչէն (1418), իսկ
երկրորդը Խաչատուր երէցէն (1448):

«Ի թվիս Հայոց Պկէ, ի յառաջնոր-
դութեան սորա աստուածաբան և քաջ
բարունապետիս մերոյ Մարգարայ վար-
դապետիս» (Յիշտ. ԺԵ. Դարի, Ա. Մասն,
թիւ 232):

«Ի թուականիս Հայոց ՊՂէ գրեցաւ
. . . ի հայրապետութեան տեառն Ըռստա-
կէսի, և մերոյ առաջնորդիս սուրբ ուխ-
տիս վարադայ տէր Յովհաննէս եպիսկո-
պոսի և Մարգարայ վարդապետի, ձեռամբ
Խաչատուր երիցու» (Յիշտ. ԺԵ. Դարի,
Ա. Մասն, թիւ 699):

ՅԱՆԿ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒԱՆՑ

- Աղի գիւղ վտապուերականի, էջ 39
 Ամինիա, մայր Յունան վարդապետի 8, 10
 Անձնապատ մենաստան 15, 16
 Ապրակունեաց վանք 2, 5
 Առաքել Արք. Սիւնեաց 2, 3, (1356 ? -
 1422 ?) 7
 Ասպիսընկոյ վանք 14
 Արարատեան գաւառ 20
 Արթուն = Գրիգոր Տաթևացի 38
 Արկուռի գիւղ 40
 Արճէշ 1
 Բերդավանք գիւղ 15, 16
 Բէհնամշահ 24
 Բէշքէն, որդի պարոն Սմբատի 30
 Գալուստ վարդապետ (1370 ? - 1425 ?) 12,
 18
 Գէորգ բաբունապետ 42
 Գորի գիւղաքաղաք 25
 Գրիգոր արղ. Գորեցի, վրացտանեցի
 (1370 ? - 1430 ?) 25

Գրիգոր Որոտնեցի = Տաթևացի 43

» Տաթևացի (1344 ? - 1409) 1, 6,
30, 42

» Գրիչ (1415) 19

Եզեկիէլ Վրդ. Կապանեցի 8

Եղեվանք 44

Եղիվարդի Վանք 19, 20

Երևան 39

Երզնկայ 1

Երնջակ 6

Երուսաղէմ 1, 4, 35, 43

Եւստաթէի Առաքելոյ Աթոռ, Վանք 12,
17, 22, 25, 27

Էջմիածին 40, 41

Ըստապէս հայրապետ (1448) 46

Թամթայ, մայր Սարգիս գրչի 38

Թանսուղ, մայր Մկրտիչ Վարդապետի 33

Թաւրիզ 23

Թիֆլիս 41

Թովմայ Վրդ. Մեծոփեցի 13, 23, 33, 35
(1378 - 1446), 39, 43, 44, 45

Թուճայ գրիչ Կաֆայեցի (1422) 31

» աբղ. գրիչ, որդի Մարտիրոսի
(1370 ? - 1430 ?) 18, 27

» գրիչ Սպառակերացի (1423) 15

Իւանէ, եղբայր Բէշքէնի	30
Լանկթամուր	40
Լոս Անճելոս	8
Լուսաբեր, հայր Գրիգոր արեղայի	25
Խաչատուր երէց (1448)	46
Խորիշխան, հայր Յոհանէս վարդապետի	26
Կարապետ Գրիշ (1425)	31
Կաֆայ	36
Կիրակոս Կթղ. Վիրապեցի	32
» Վրդ., աշակերտ Թովմայ Մե-	
ծոփեցիի	40
Կոստանդնուպոլիս	4
Հաճաթ, մայր Յոհանէս վարդապետի	26
Հերմոնի վանք	32
Հսկող = Գրիգոր Տաթևացի	17
Ղբէլ, մայր Յակոբ արեղայի	43
Մաթթէոս Վրդ. Զուղայեցի (1352?-1412?)	5
» Եպս. Կաֆայի (1375?-1435?)	36
Մատրաս	8
Մարգարէ Վրդ. Վարադեցի (1380?-1450?)	45, 46
Մելիք, քոյր Գրիգոր Տաթևացիի	7
Մելքիսեդեկ	42

Մեծոփայ վանք 9, 34, 37

Մխիթար րաբունապետ (1370? - 1440?) 29

Մկրտիչ Վրդ. Նահապետենց (1373-1445?)

Մովսէս Գրիչ (1416?) 30 [33

Յակոբ Վրդ. Ասպիսընկցի (1370? - 1425?)

14, 16

» Արդ. Բերկրեցի, որդի Յուսկան

(1380? - 1440?) 43

Յովանէս Վրդ. Գրիչ (1415) 29

Յովաննէս Գրիչ Եղնկացի (1380? - 1430?) 4

Յոհանէս Վրդ., որդի Խորիշխանի (1370? -

1430?) 26

Յովաննէս Կոլոտիկ, Գօլօտենց (1370? -

1443) 32

» Վրդ. Մեծոփեցի 39

» Գրիչ Մոկացի (1420) 15, 20

» Որոտնեցի 1, 5

» Եպս., Առաջնորդ Վարադայ

ուխտին (1448) 46

Յուսկան Վրդ. Գրիչ (1370? - 1422?) 8,

10, 25

Յուսկան Որդոյ Վանք 34, 44

Ներսէս Կրն. Նկարիչ 3

Նիկողայոս Գրիչ (1418) 46

Ս. Նշան Անապատ 18, 28

Շամախի 24

Շամշայ, մայր Թովմայ Մեծոփեցի 39

Շատիկի Անապատ 7

Շմաւոն Քէն. 8

Պղիարքոս 24

Պողոս Կթղ. 36

Ռշտունեաց երկիր 16

Սարգիս Գրիչ (1401) 8

» » , որդի Թամամի (1370 ? -
1430 ?) 22

» « , որդի Մարտիրոսի և Թամ-
թայի (1375 ? - 1430 ?) 37, 38

» Վրդ. (+ 1402) 39

Սիմէոն բարունապետ Սիւնեցի (1370 ? -
1428) 12, 17, 20, 28

Սիւս 40

Սմբատ Օրբէլեան 2, 30

Սուխարայ, Սուհարայ Վանք 15, 39

Ստեփանոս գրիչ Ախալցըխացի (1423) 36

» Վրդ. Թաւրիդեցի, որդի Բէն-
նամշահի (ԺԴ. - ԺԵ. Դար) 23, 24

Վարդապետ, Վանք 46


Վարդան Վրդ. (+ 1406) 39

Վիեննա 4

Տաթևի Վանք 2, 7, 17, 29

Փարիզ 40

Բրիտանական Գրիչ (1423) 37





2 ԱՄԵՐԻԿԵԱՆ ՏՈԼԱՐ